ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2256-Ա « 19 » հունիսի 2024թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածով՝ Երևան քաղաքի Հին Նորքի վերակառուցման ծրագրի իրականացման նպատակով.

1. Ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) աշխատանքային խումբը ստեղծվում է Հին Նորքի վերակառուցման ծրագրի մշակման նպատակով և իրականացնում է վերակառուցման ծրագրի մշակման համար անհրաժեշտ գործողություններ,

2) աշխատանքային խմբի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում, Հին Նորքի վերակառուցման ծրագրի աշխատանքներն իրականացնելու համար կարող են ներգրավվել նաև այլ մասնագետներ,

3) աշխատանքային խումբը ստեղծվում է վեց ամիս ժամկետով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
19.06. 2024 թ.
N 2256-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

N	Անուն, ազգանունը	Պաշտոնը
1.	Լևոն Վարդանյան Հրաչիկի	Ճարտարապետ աշխատանքային խմբի ղեկավար
2.	Լիլիթ Վարդանյան	Ճարտարապետ աշխատանքային խմբի անդամ
3.	Արա Ավետիսյան	Ճարտարապետ աշխատանքային խմբի անդամ
4.	Կարո Այվազյան	Ճարտարապետ աշխատանքային խմբի անդամ
5.	Լևոն Վարդանյան Ռաֆիկի	Կոնստրուկտոր, ճարտարագետ աշխատանքային խմբի անդամ
6.	Հարություն Ավագյան	Ճանապարհային ճարտարագետ, շինարար աշխատանքային խմբի անդամ
7.	Արմեն Գալքանյան	Լուսավորության մասնագետ աշխատանքային խմբի անդամ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**